

ՕՃԱԳԱԼԱՐԻ ԼԵՂԱՄՈՒՂ ՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Օձագալարը հնդկացորենազգիների ընտանիքից բազմամյա խոտաբույս է՝ 30—100 սմ բարձրությամբ, օձաձև պարուրված արմատով, երկար, նշտարաձև տերևներով, բաց յասամանագույն ծաղիկներով: Մեր հանրապետությունում հանդիպում է այլպան և ենթայլպան գոտիներում, ծովի մակերևույթից 1500—3500 մ բարձրության վրա, բազմաթիվ տեսակներով, որոնցից մենք կլինիկական հետազոտության ենթ ենթարկել *Polygonum carneum* C. Koch-ը, որը հայտնի է մանդիկ, օձտակ, ըստ Ամիրզոյլաթ Ամասիացու՝ նաև հովվի բիր և բրսի անդաբու անուններով:

Բույսի արմատը և կոճղարմատը պարունակում են 25% դաբաղանյութեր, 0,44% գալաթթու, 0,5% կատեխին, 26,5% օսլա, օքսիմեթիլենտրախինոն, թրթնջկաթթվական կալցիում, ասկորբինաթթու, կարոտին և այլն [3, 4, 8]: Ամիրզոյլաթը օձագալարի արմատը, որպես ուժեղ մածոզ միջոց, կիրառել է բոլոր տեսակի արյունահոսությունների, լուծերի, արգանդի, միջին ականջի և այլ օրգանների թարախային արտադրությունների և բորբոքային ուռուցքների ժամանակ [1]: Այն փորձառական պայմաններում կիրառվել է Ս. Հ. Միրզոյանի և նրա աշխատակիցների կողմից՝ բերանի լորձաթաղանթի վրա, առողջ և ստոմատիտով հիվանդ լանձանց մոտ: Վերջիններս պարզել են, որ օձագալարի սպալող և հակաբորբոքիչ հատկությունները անհամեմատ ուժեղ են նույն նպատակով կիրառվող դատանիայի ազդեցությունից [6]: Բազմաթիվ կլինիկական հետազոտություններ [2, 5, 8] հիմնավորել են օձագալարի եփուկի կամ ջրիկ մզվածքի արդյունավետ ներգործությունը բերանի խոռոչի լորձաթաղանթի բորբոքումների և աղիների սուր և խրոնիկական խիտահարումների ժամանակ: Ժողովրդական բժշկության մեջ արմատը կիրառվում է միզուղիների և լեղուղիների բարային հիվանդության, կուպիտների, վագինիտների, ստամոքսաաղիքային տրակտի արյունահոսությունների ժամանակ [2, 7]:

Օձագալարի 10,0—200, 0 գ եփուկը, ներքին ընդունման ձևով այլ նուստակներով կիրառելիս մեզ հաջողվեց ի հայտ բերել դեղաբույսի բուլբոլին մի նոր հատկանիշ՝ կապված նրա լեղամուղ հատկության հետ: Ի դեպ, մեզ մատչելի դրականության մեջ օձագալարի այս հատկության մասին որևէ տեղեկություն չկա, ուստի և բազմաթիվ հիվանդներից ստացված տվյալները մենք հարկ համարեցինք շարադրել այս հոդվածում:

Լաբորատոր պրակտիկայում դուրսենածի համար լայնորեն կիրառվում են «Լեղապարկի ռեֆլեքս» (Մեյցեր-Լայոնի փորձը) առաջացնող բազմաթիվ

միջոցներ, այդ թվում՝ մազնեղիում սուլֆատ, ձիթապտղի յուղ, պեպտոն, պիտուիտրին, հիստամին և այլն: Օձագալարի արմատի լեղամուղ հատկությունը, նրա արդյունավետության աստիճանը որոշելու նպատակով ստացված տվյալները համեմատել ենք դուոդենաոֆի պրակտիկայում մեծ տարածում գտած մազնեղիում սուլֆատի ցուցանիշների հետ: Այսպես՝ հեպատոբիլիար պաթոլոգիայով տառապող 34 հիվանդի մոտ, կատարելով բազմակի դուոդենաոֆի, հնարավորություն ենք ունեցել «լեղապարկի ռեֆլեքս» ստանալու համար մի դեպքում կիրառել մազնեղիում սուլֆատ (25%-անոց, 50 մլ, 38°), հաջորդ դեպքում՝ օձագալարի արմատի եփուկ (5%-անոց, 50 մլ, 38°):

Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ օձագալարի արմատի եփուկը օժտված է առավել լեղամուղ հատկությամբ մազնեղիում սուլֆատի համեմատությամբ: Այսպես, եթե մազնեղիում սուլֆատի կիրառման դեպքում «լեղապարկի ռեֆլեքս» 34 հիվանդներից չի ստացվել 10 հոգու մոտ, ապա օձագալարի արմատի եփուկի կիրառման հետևանքով, նույն քանակությամբ հիվանդներից «լեղապարկի ռեֆլեքս» չի ստացվել միայն 3 հոգու մոտ, որոնցից 2-րդ ունեցել են լեղաձորանի օբստրուկցիա՝ լեղաքարային հիվանդության հոդի վրա: Օձագալարի արմատի եփուկից ստացված լեղամուղ արդյունքը բնորոշ է նաև լեղապարկից արտազատվող լեղու առավել քանակով, թանձրությամբ, բարձր տեսակարար կշռով և չոր մնացորդով: Օձագալարի եփուկը հիվանդները տարել են լավ: Մեր կարծիքով, դեղաբույսի լեղամուղ արդյունքը պայմանավորվում է ոչ միայն 12-մատնյա աղու լորձաթաղանթի, զիպի լեղապարկ գնացող ռեֆլեքսներով և Օդդիի սֆինկտրի թուլացմամբ, այլև բարակ աղիների վերին հատվածներում խոլեցիստոկինինի առաջացումով, որը, ինչպես հայտնի է, ներդաստվելով արյան մեջ, ոչ միայն կծկում է լեղապարկը, այլև դյուրացնում է լեղու արտահոսքը:

Բացի լաբորատոր նպատակներից, օձագալարի արմատի եփուկը (5%-անոց, մեկական ճաշի գդալ, օրական 3 անգամ, ուտելուց առաջ) կիրառել ենք նաև բուժման նպատակով, լեղապարկի հիպոկինետիկ դիսկինեզիաների ժամանակ, դյուրածների ձևով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ լեղամիջոցն ընդունելուց 0,5—1 ժամ հետո, արտահայտված չափերով թուլացել են աչ թուլակողի շրջանի ցավերը, նկատվել է լեղապարկի հատվածի ճնշման և ծանրության վերացում: Այս բոլորը վկայել են լեղապարկի տոնուսի բարձրացման և լեղականգի վերացման մասին:

Կիրիլյան, քաղաքային հիվանդանոց

Ստացված է 20.III 1979 թ.

О ЖЕЛЧЕГОННОМ СВОЙСТВЕ ЗМЕЕВИКА

А. А. ТОРОСЯН

Отвар корня змеевика (*Polygonum carneum* C. Koch) в дозе 5% — 50 мл обладает выраженным желчегонным свойством, вызывая сокращение желчного пузыря и расслабление сфинктера Одди. Желчегонный эффект змеевика несколько сильнее действия сульфата магния.

Отвар корня змеевика можно успешно применять не только с целью дуоденажа при вызывании «пузырного рефлекса», но также при лечении гепатобилиарной патологии с дискинезией желчного пузыря.

1. Ամիրգյուլար Ամարթացի. Անգիտաց անպէտ կամ Բառարան բժշկական նյութոց. Վրենսա., 1926.
2. Губанов И. А., Крылова И. Л., Тихонова В. Л. Дикорастущие полезные растения СССР, М., 1976.
3. Золотницкая С. Я. Лекарственные ресурсы флоры Армении. Ереван, 1, 1958.
4. Мацку Я., Крейча И. Атлас лекарственных растений. Братислава, 1970.
5. Машковский М. Д. Лекарственные средства, 1. М., 1972.
6. Мирзоян С. А., Бабасян О. В., Овян Е. М. Лекарственные растения Армении и их лечебные препараты. Ереван, 1949.
7. Носаль М. А., Носаль И. М. Лекарственные растения и способы их применения в народе. Киев. 1958.
8. Турова А. Д. Лекарственные растения СССР и их применение. М., 1974.